

2024թ. հունիսի 18-21-ը ՀՀ ԳԱԱ-ն <<Գիտությունը՝ հանրակրթությանը>> հատուկ ծրագրի շրջանակներում, ՀՀ ավագ դպրոցների ֆիզիկայի ուսուցիչների համար կազմակերպում է <<Ժամանակակից ֆիզիկա. հանրամատչելիացման և ուսուցման հիմնախնդիրներ և լուծումներ>> խորագրով գիտագործնական համաժողով՝ հետևյալ ծրագրով.

ԾՐԱԳԻՐ

18 հունիսի, 2024թ., ՀՀ ԳԱԱ դահլիճ

Գիտաժողովի բացում,

Ձեկուցումներ,

Ֆիզիկայի զարգացման ժամանակակից միտումները,

Աստղաֆիզիկան այսօր,

Փորձարարական ֆիզիկայի զարգացման հիմնական ուղղությունները,

Լազերային ֆիզիկա:

Համաժողովի աշխատանքները կսկսվեն ժամը 11:00-ին ու կավարտվեն 15:00-ին:

19 հունիսի, 2024թ., ք. Աշտարակ, ՀՀ ԳԱԱ ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտ

Ձեկուցումներ երկրաչափական օպտիկայի, ֆիզիկական օպտիկայի, ոչ գծային օպտիկայի վերաբերյալ,

Փորձարարական մաս՝ նվիրված հիմնականում օպտիկային ու լազերային ֆիզիկային,

Փորձարարական մաս՝ ըստ համաժողովի մասնակից ուսուցիչների նախասիրության,

Աշխատանքային օրվա ամփոփում կլոր սեղան տարբերակով:

Աշխատանքային նիստերը հիմնական զեկույցները ղեկավարում է ինստիտուտի տնօրեն, ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա.Վ.Պապոյանը:

Աշխատանքային նիստերը Աշտարակում սկսվում են 11:00-ին և ավարտվում են 15:00-ին:

20 հունիսի, 2024թ., Մեծամոր, Հայաստանի ատոմային էլեկտրակայան

Համաժողովի մասնակիցների համար ատոմակայանի մասնագետների կողմից կներկայացվեն զեկուցումներ ատոմային և միջուկային ֆիզիկայից, ինչպես նաև Մեծամորի ատոմակայանի աշխատանքային ողջ ցիկլը, որը կուղեկցվի էքսկուրսիաներով և ցուցադրումներով:

Աշխատանքային օրը ավարտվում է ատոմակայանի ղեկավարության հետ հանդիպմամբ:

Համաժողովի աշխատանքները Մեծամորում սկսվում են 11:00-ին և ավարտվում 15:00-ին:

21 հունիսի, 2024թ., երջան, ՀՀ ԳԱԱ Ֆիզիկական պրոբլեմների ինստիտուտ

Չեկուցումները կվերաբերեն Քվանտային ֆիզիկային ու ավագ դպրոցում նրա հիմունքների դասավանդմանը,

Համաժողովի մասնակիցները կլինեն ինստիտուտի լաբորատորիաներում, հնարավորության սահմաններում ըստ նախասիրության կծանոթանան փորձարարական տեղակայանքներին:

Ինստիտուտի տնօրեն Վ. Քոչարյանը ֆիզիկայի ուսուցիչներին կծանոթացնի ինստիտուտի պատմությանն ու ձեռքբերումներին:

Աշխատանքային օրվա գիտական նիստերը և հիմնական զեկույցները վարում է ֆ.մ.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ Հ.Ա. Սարգսյանը:

Համաժողովի աշխատանքային վերջին օրը ավարտվում է ՀՀ ԳԱԱ-ում 4-օրյա աշխատանքների արդյունքների ամփոփմամբ ու մասնակիցներին՝ հավաստագիր վկայագրերի շնորհմամբ:

Գիտաժողովին մասնակցել ցանկացողները/հրապարակման պահից մինչև 13.06.24թ. ներառյալ/ կարող են գրանցվել հետևյալ հղմամբ՝

https://docs.google.com/forms/d/e/1FAIpQLSfFFQFem_ITI6UnY_gB8CNHDxSm-3i4DVcUTMzk2OaoaNGb7g/viewform

Հ.Գ. Մասնակիցների տեղափոխումը Աշտարակ և Մեծամոր իրականացվում է ՀՀ ԳԱԱ նախագահության շենքի մոտից, կենտրոնացված ձևով: Մասնակիցների սնունդը աշխատանքային բոլոր օրերին կազմակերպվում է տեղում՝ ժամը 13.00-ին: Սննդի, ինչպես նաև մնացած բոլոր ծախսերը հոգում է ՀՀ ԳԱԱ-ն:

Գիտաժողովի կազմկոմիտե